

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ
ԽՈՍՔԸ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ**

20.06.2014

Հարգելի հայրենակիցներ:

Մեր երիտասարդ պետությունը անում է հնարավորը՝ իր քաղաքացիների առողջությունը պահպանելու և բուժօժանայությունները հանրության բոլոր շերտերին հասանելի և մատչելի դարձնելու համար: Եվ այս ոլորտում առաջին հերթին անգնահատելի դեր ունեն բուժաշխատողները, ովքեր իրենց գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները ծառայեցնում են մեր պետության և հանրության շահերին:

Բուժաշխատողի օրվա կապակցությամբ շնորհավորում եմ մարզի առողջապահական համակարգի ղեկավարներին և աշխատակիցներին, մաղթում առողջություն, անձնական երջանկություն, մասնագիտական նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ:

Լավագույն ցանկություններով՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան